11150

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան

«01» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 232 - 25

Նախաձեռնող՝ ***«Սոլար սթար իքս» ՍՊԸ***
Արմավիրի մարզ, Վաղարշապատ 1101, Ա. Մանուկյան թ. փ.229

Գործունեությունը՝ ***Վանեվան բնակավայրի վարչական տարածքում թիվ 2 հողամաս հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում***
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 232 - 25

«01» հոկտեմբեր 2025թ.

Վանեվան բնակավայրի վարչական տարածքում թիվ 2 հողամաս հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Սոլար սթար իքս» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք, Վանեվան բնակավայր

Ներածական մաս. Գեղարքունիքի մարզի Վանեվան բնակավայրի վարչական տարածքում թիվ 2 հողամաս հասցեում էներգիայի արտադրության նպատակով նախատեսում է իրականացնել արևային ֆոտովոլտային արտադրական կայանի (այսուհետ՝ Արևակայան) կառուցում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների և հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ N 25022025-05-0082 (կադաստրային ծածկագիրը՝ 05-083-0103-0037) և Վարդենիս համայնքի կողմից տրված նախագծային թույլտվությունը՝ ՆՆԹ-3602-25, տրված՝ 05.06.2025թ:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ էներգետիկ տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը էներգետիկայի, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 6.5 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը տեղակայված է Վարդենիս լեռնաշղթայի հյուսիսային ստորոտներում՝ Մասրիկ գետի ձախ ափին, ծովի մակարդակից մոտ 1950 մ բարձրության վրա: Տարածքն անտառածածկ չէ, տարածքում բացակայում են ծառերը, ծառաթփերը, առկա է տարախոտային բուսականություն: Նախկինում տարածքն օգտագործվել է որպես արոտավայր, ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների, ուստի ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, բացակաում են: Բնության հատուկ պահպանվող տարածքները, պատմամշակութային հուշարձանները, բնության հուշարձանները բացակայում են:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը գտնվում են 5 մ-ից խորը հորիզոններում:

Նախատեսվող «Սոլար Սթար-1» արևակայանը իրենից ներկայացնում է 5,50164 ՄՎտ պիկային հզորությամբ 8664 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով կայան: Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ նախատեսվում է կառուցել 110/0.8/0.8 կՎ լարման 7000 կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայան՝ 110 կՎ լարման բաժանիչով և անջատիչով (էլգազային): Արևակայանի միացումը նախատեսվում է իրականացնել «Ոսկեհատ» 110 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի մոտակա խարսխային հենարանից, ինչի նպատակով կկառուցվի 573 մ երկարության 110 կՎ լարման օդային գծի: Նոր կառուցվող տրանսֆորմատորային ենթակայանի մակերեսը կկազմի 480 մ^2: Ուժային տրանսֆորմատորի համար նախատեսված է յուղահավաք՝ 15 մ^2 և յուղընդունիչ հոր՝ 12 մ^3 ծավալով: Նախատեսված է կառուցել նաև 0.8/0.4 կՎ լարման սեփական կարիքների համար ենթակայան:

Արևակայանի կառուցման համար ընտրվել են JAM72D42-635/LB ֆիրմային արտադրության 22.7% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 635 Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2465x1134x30մմ: Փոխակերպիչները Solis-250K-EHV-5G-PLUS 250 կՎտ ելքային հզորության և Solis-S6-GU350K-EHV 350 կՎտ ելքային հզորության: Արևակայանը տեղադրվելու է ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով՝ բետոնե հիմքերով ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են կոնստրուկցիայով՝ հորիզոնի նկատմամբ 30° թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35 մ/վ քամու արագության համար: Նախագծով նախատեսվում է կառուցել 110/2*0,8 կՎ լարման ենթակայան՝ մակերեսով: Արևակայանի տարածքը ցանկապատվելու է 2 մ, տրանսֆորմատորային ենթակայանը՝ 3մ բարձրության մետաղական ցանկապատով:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր 2 մ բարձրության ցանկապատով: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, տեղակայվելու է պահակատուն: Շինարարության ժամանակ աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, գրասենյակը, տեղադրվելու են ժամանակավոր վագոն տնակներում:

Շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում:

Շինարարական տեխնիկայի կայանման համար նախատեսված տարածքում տեղադրվելու է մանրախիճ կամ բետոնասալեր: Շինհրապարակի տարածքում նախատեսվում է մեքենաների անիվների լվացման հարթակ, որտեղից հոսքաջրերն ուղղորդվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան: Շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով բակային սելավաջրերի հեռացման համակարգի միջոցով կհեռացվեն դեպի տարածքում տեղադրվող մեկ հատ համապատասխան տարողությամբ պարզարան: Պարզարանի պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինարար:

Շինարարության համար անհրաժեշտ նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից: Բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակում, մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից՝ ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային կարիքներ համար: Շինարարության փուլերում ջուրն օգտագործվելու է աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, հրդեհամարման և անիվների լվացման համար: Խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի, տեխնիկական ջուրը ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով: Ջրի սպառումը կլինի ընդամենը 1284,53 մ³/օր: Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ: Ընդամենը հանվելու է 282,59 մ³ հողային գրունտ, որից 77 մ³ կատարվելու է հետ լիցք, մնացած՝ 205,59 մ³-ը կհեռացվի Վարդենիսի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Հողի բերրի շերտի հանման, պահման և հետագա օգտագործման աշխատանքները կիրականացվեն Կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N 1404 որոշման պահանջներին համաձայն: Հողի բերրի շերտը 16,41 մ³ ծավալով կօգտագործվի բարեկարգման աշխատանքների համար: Ելնելով գործունեության բնույթից՝ հրդեհավտանգությունն ապահովելու նպատակով, տարածքի ազատ հատվածներում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվելու:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներից շինաղբը, բետոնի մնացորդները, պարկերը և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են աղբամաններ, աղբահեռացումը կատարվելու է ըստ անհրաժեշտության՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել աղբի տեսակավորման աղբամաններ:

Շինարարության փուլերում առաջացող թափոնները կլինեն շինարարական աղբի՝ նյութերի մնացորդների (ավազ, շեբեն, ցեմենտ, պլաստմասե իրեր և այլն), աղտոտված լաթերի, պարկերի, մետաղական մնացորդների (մետաղյա լարերի մնացորդներ, տարաներ և այլն) և կենցաղային աղբի տեսքով:

Շահագործման փուլում բնառեսուրսների օգտագործում չի նախատեսվում, գործելու է միայն էլեկտրամատակարարման համակարգը: Արևակայանն ապահովված է լինելու արտաքին լուսավորության, տեսահսկման սարքավորումներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու են տարածքի մաքրման, հարթեցման և բարեկարգման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է

իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված:

Այդ նպատակով նախատեսվում է.

• շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն,

• համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝ շինարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանման նպատակով,

• բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,

• գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար մոնիթորինգի իրականացում, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,

•ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման նպատակով՝ մինչև գործունեության մեկնարկը տարածքի մոնիթորինգի իրականացում,

• տրանսպորտային միջոցների երթևեկության վերահսկում՝ դաշտային տարածքներում վերջիններիս տեղաշարժը բացառելու և վերահսկելու նպատակով,

• շինտեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք մեքենաների և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,

• անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով մշտական մոնիթորինգի իրականացում,

•շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկողություն,

• բարեկարգման աշխատանքների կատարման ապահովում, վերահսկում,

• էլեկտրահաղորդման գծերի վերահսկում էլեկտրակայանքներն սպասարկող մասնագիտացված սպասարկող անձնակազմի միջոցով՝ ապահովելով վերջիններիս անվտանգության պայմանները:

Պատճառաբանական եզրահանգումներ. Արևակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացն իրականացվել է բնապահպանական ոլորտը կարգավորող օրենսդրական պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, տարբեր գերատեսչություններ, Գեղարքունիքի մարզպետարանը, Վարդենիսի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Արևային էլեկտրաէներգիային բնապահպանական տեսակետից մաքուր է՝ չի աղտոտում շրջակա միջավայրը: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները շինարարության փուլում կրելու են ժամանակավոր բնույթ: Շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու նպատակով (ենթակայանի տարածքում հնարավոր

վթարների դեպքում) նախատեսվում է յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացնել և հանձնել համապատասխան վերամշակող կազմակերպություններին, հնարավոր արտահոսքերի դեպքում կօգտագործվի spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, իսկ յուղերով աղտոտված ավազը կամ մանրախիճը կհանձնվի մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով: Շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով, համաձայն ներկրված պանելներն օգտագործման երաշխիք: Շահագործման ժամանակահատվածում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ պայմանագրային հիմունքներով՝ մինչև դրանց արտահանման կամ վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Շինարարական աշխատանքներին ներգրավվելու են համայնքի բնակիչներ, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով: «Սոլար սթար իքս» ՍՊԸ-ն Վանեվան բնակավայրում իրականացրել է ասֆալտապատման աշխատանքներ:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Գեղարքունիքի մարզի Վանեվան բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:
- Անհրաժեշտ է հետևել Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների կանոնները հաստատելու մասին» N 523 -Ն որոշման, արտակարգ իրավիճակների, տեխնիկական և աշխատանքի անվտանգության նորմերի պահանջներին:
- Խստորեն հետևել ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Բացառել կայուն օրգանական աղտոտիչներ (պոլիքլորացված բիֆենիլներ) պարունակող տրանսֆորմատորային յուղերի օգտագործումը:
- Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների աճելավայրերի կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, տեղեկացնել համապատասխան պատասխանատու գերատեսչություններին, իսկ շինարարական աշխատանքների ընթացքում նաև դադարեցնել աշխատանքները միչև համապատասխան միջոցառումների կիրառումը:
- Միչև շինարարական աշխատանքների մեկնարկը անհրաժեշտ է փոփոխել 110 կՎ լարման օդային գծի համար անհրաժեշտ 4 խարսխային հենարանների հողի նպատակային և գործառնական նշանակությունը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սոլար սթար իքս» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Վանեվան բնակավայրի վարչական տարածքում թիվ 2 հողամաս հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան